

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության (2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն) քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 15-րդ հոդվածի 2-րդ մասը «384-րդ» բառից առաջ լրացնել «190-րդ, 200-րդ, 201-րդ, 311-313-րդ,» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 200-րդ հոդվածի՝

1) 1-ին եւ 3-րդ մասերից հանել «կառավարչական գործառույթներ իրականացնող» եւ «կառավարչական գործառույթ իրականացնող» բառերը.

2) 1-րդ մասի «իրավունքից զրկելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով» բառերը փոխարինել «իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով» բառերով, իսկ «ազատագրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով» բառերը՝ «ազատագրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով» բառերով.

3) 3-րդ մասում «առավելություն ստանալը» բառերից հետո լրացնել «կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը» բառերով.

4) 5-րդ մասի՝

ա. առաջին պարբերությունում «գործառույթներ» բառից հետո լրացնել «կամ զբաղեցնում է ցանկացած այլ պաշտոն» բառերը.

բ. երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Առետրային կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում կամ եթե այդ անձը կաշառք տալու մասին ոչ ու, քան 3 օր հետո կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին»:

Հոդված 3. Օրենսգրքի 201-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով».

2) 3-րդ մասի՝

ա. առաջին պարբերությունում՝ «առավելություն ստանալը» բառերից հետո լրացնել «կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը» բառերը.

բ. երկրորդ պարբերությունում՝ «ազատագրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով» բառերը փոխարինել «ազատագրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 308-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «հինգհարյուրապատիկի» բառը փոխարինել «երեքհարյուրապատիկի» բառով.

2) 4-րդ մասում «311-րդ, 312-րդ եւ 313-րդ հոդվածներով նախատեսված արարքների կատարման առումով» բառերը փոխարինել «311-րդ, 311.2-րդ, 312-րդ, 312.2-րդ եւ 313-րդ հոդվածներով նախատեսված» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 311-րդ, 311.1-ին, 311.2-րդ հոդվածների 1-ին մասերում «առավելություն ստանալը» բառերից հետո լրացնել «կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը» բառերը:

Հոդված 6. Օրենսգրքի 312-րդ հոդվածի 4-րդ մասում «կաշառք տալու մասին» բառերից հետո լրացնել «ոչ ուշ, քանի 3 օր հետո» բառերը:

Հոդված 7. Օրենսգրքի 312.1-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

2) 2-րդ մասում «երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի» բառերը փոխարինել «երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի» բառերով:

3) 4-րդ մասում «վարձատրություն տալու մասին» բառերից հետո լրացնել «ոչ ուշ, քանի 3 օր հետո» բառերը:

Հոդված 8. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 312.2-րդ հոդվածով.

«ՀՈՂԿԱԾ 312.2. ԻՐԱԿԱՆ ԿԱՍ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՍԱՐ ԱՊՕՐԻՆԻ ԿԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ

1. Անձին՝ նրա իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը, այսինքն՝ անձին անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը իր կամ իր ներկայացրած անձանց օգտին որևէ պաշտոնատար անձի կամ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար:

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Ապօրինի վարձատրություն տալը, որը կատարվել է խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

3. Ապօրինի վարձատրություն տալը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

4. Ապօրինի վարձատրություն տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել ապօրինի վարձատրություն տալու շորթում, կամ եթե այդ անձը ապօրինի վարձատրություն տալու մասին ոչ ուշ, քան 3 օր հետո կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին»:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՈՐՔՐԻՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության Բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
<p>Աժ պատգամավոր Կորյուն Նահապետյան</p>	<p>1. Նկատի ունենալով GRECO-ի կողմից ՀՀ գնահատման 3-րդ փուլի զեկույցով ներկայացված առաջարկությունները՝ անհրաժեշտ է նախագծում պասիվ և ակտիվ կաշառակերության /կաշառք տալու և ստանալու/ համար սահմանել միևնույն պատժատեսակները և պատժի միևնույն չափերը:</p> <p>2. Նկատի ունենալով GRECO-ի կողմից ՀՀ գնահատման 3-րդ փուլի զեկույցով ներկայացված առաջարկությունները՝ անհրաժեշտ է կաշառակերության համար նախատեսված պատասխանատվությունից ազատել միայն այն դեպքում, եթե անձը այդ մասին կամավոր հայտնում է «անհապաղ»:</p> <p>3. Անհրաժեշտ է նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետում հստակեցնել «առևտրային կազմակերպություններում» բառերը, քանի որ օրենսգրքի 200-րդ հոդվածի 5-րդ մասում «առևտրային կազմակերպություններ» բառերը օգտագործվում են երկու անգամ:</p>	<p>1. Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>3. Ընդունվել է</p>	<p>1. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>2. Նախագծում հանցագործությունների մասին հայտնելու համար սահմանվել է եռօրյա ժամկետ</p> <p>3. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>